ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 19.06.2019 թ.
ժ. 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Համբարձումյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մովսեսյան (ԳԱ), Ա. Գասպարյան (ԳԱ)
Գ. Սաֆարյան (ԲԱ), Ա. Տեր-Թորոսյան (ԲԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 14.06.2019թ թիվ ԳԲՔԱ -ՆԳ-2019/30 որոշումը կատարելու մասին

(Ա. Համբարձումյան)

1.2 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ 14.06.2019թ թիվ ԳԲՔԱ -ՆԳ-2019/30 որոշումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց դադարեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի 15.05.2019 թվականի թիվ 4 արձանագրությամբ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով «Լիլանարմ» ՍՊԸ –ի հայտը մերժելու որոշումը, ինչպես նաև 22.05.2019 թվականի թիվ 5 արձանագրությամբ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով կայացած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Հայտի /որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր/ գնահատման արդյունքները

(Ա. Համբարձումյան)

2.1 «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող ճանաչված ««Լիլանարմ» ՍՊԸ-ն, հրավերով սահմանված ժամկետում, ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
	«Լիլանարմ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3.«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով գնման ընթացակարգի <u>ընտրված մասնակցի մասին</u>

(Ա. Համբարձումյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Լիլանարմ» ՍՊԸ–ին,

4. <u>Աշխատանքների կատարման գնման պայմանագրեր կնքելու որոշում ընդունելու մասին</u>

(Ա. Համբարձումյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝

--- **Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների** պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել **«Լիլանարմ» ՍՊԸ --ին:**

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել **«Լիլիանարմ»** ՍՊԸ --ին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4.2 Հաստատել 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տաս օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

5.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Համբարձումյան)

5.1 Հանձնաժողովը որոշեց՝ գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագրեր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդ օրը ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ Ա. Համբարձումյան

Անդամներ՝ Ա. Տեր-Թորոսյան

Ա. Գասպարյան

Գ. Սաֆարյան

Ա. Մովսեսյան

Քարտուղար՝ Գ. Հուրյան